ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ /ԲԱՂՐԱՄՅԱՆԻ/
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան (Բաղրամյան) համայնք,
Բաղրամյան 2, Հեռ. (0233) 22250 , baghramyanbaghramyan.mul2-
armavir.gov.am

N 18
03 փետրվար 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 03.02.2020թվականի կայացած արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՍԱՀԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1-02073-2020
03 02 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 փետրվարի 2020թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

Արտահերթ նիստի
Որոշում թիվ 6

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Ավագանին որոշեց՝

1.Հաստատել համայնքի ավագանու 2020թվականի փետրվարի 03-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՉԵՌՆՊԱՀ*
Էդգար Արշակյան			
Նարեկ Տոմիկյան			
Մաթևոս Պողոսյան			
Վահան Հարությունյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

2020 թվականի փետրվարի 03
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան (Բաղրամյան) համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 03-ի
Արտահերթ նիստի
N6 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգը հաստատելու մասին: (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

2. Բաղրամյան համայնքի ղեկավարի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 փետրվարի 2020թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

Արտահերթ նիստի
Որոշում թիվ 7

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

Ավագանին որոշեց՝

1.Հաստատել համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՁԵՌՆՊԱՀ*
Էդգար Արշակյան			
Նարեկ Տոմիկյան			
Մաթևոս Պոլորյան			
Վահան Հարությունյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

2020 թվականի փետրվարի 03
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան

Համայնքի ղեկավար Ա. Սահարյան

2019թ. 2-րդ կիսամյակի կատարած աշխատանքների

Հաշվետվություն

03.02.2020թ.-ին տեղի ունեցավ Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյանի 2019թ. 2-րդ կիսամյակի հաշվետվությունը՝

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Արայիկ Հակոբյանի , համայնքի ավագանու և համայնքի բնակիչների.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ,նրանից բխող օրենսդրական ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները: 2019թ. համայնքի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները: Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2019թ. ընթացքում:Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվել ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպվել է գարնանացան և աշնանացան վարի և ցանքսի աշխատանքեր:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1.Հողի սեփականատերերը բացակայում են համայնքից

2.Ոռոգման ջրագծի բացակայություն և այլն

Ուշադրության կենտրոնում է պահվել աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվել է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է 5,0 տոննա ազոտական սիլիտրա, Անմիջական հսկողություն է իրականացվել անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարաքային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 3 առևտրի ծառայության օբյեկտները:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքօգտագործման վրա: Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ: Սուբվենցիոն ծրագրով հիմնովին վերանորոգվել է Արցախի փող. 39/1 քառահարկ շենքի տանիքը :

Սիստեմատիկաբար ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2019թ. համայնքի բյուջեից 900.0հազ. դրամ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Աշակերտների թիվը 85

Աշխատողների թիվը 27 , որից՝ ուսուցիչներ՝ 16

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նախադպրոցական 2խմբերի համար համայնքի բյուջեից 1400.0 հազ. դրամ դրամաշնորհ է հատկացվել խմբերի գործունեության պահպանման վրա:

Համայնքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, մայիսի 9-ի, մայիսի 28-ի, վերջին զանգի, և այլ միջոցառումների կապակցությամբ ծախսվել է 990.0 հազ. դրամ:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:

Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հաղթանակի օրվան նվիրված, ծաղկեպսակներ է դրվել արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձանին:

Համայնքապետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Աջակցում է սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարաքային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:

Համայնքում գործում է <<Խնամակալության և հոգեբարձության>>, հանձնաժողով:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց տրվել է ֆինանսական օգնություն: Տարվա ընթացքում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տրվել է դրամական օգնություն՝ 800.0 հազ. դրամ:

Համայնքում հաշվառված են 69 թոշակառուներ, այդ թվում 52 ծերության և աշխատանքային, 17-ը հաշվանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է՝ 17:

Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչիկների նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

2019 թվականի 2-րդ կիսամյակում համայնքում կատարվել է հսկայածավալ աշխատանքներ. որոնց մեջ մտնում են / փողոցների լուսավորությունը , համայնքի տարածքում նստարանների տեղադրումը , ճանապարհների վերանորոգում , համայնքապետարանի շենքի վերանորոգումը , պատուհանների և դռների տեղադրումը , սուբվենցիոն ծրագրով համայնքի Արցախի փողոցի 39/1 բազմաբնակարան քառահարկ շենքի տանիքի վերանորոգումը , համայնքի տարածքում տեղադրվել է 2 կանգառ , տեղադրվել է ,, Բաղրամյան ,, անվան վահանակը , վերանորոգվել է միջհամայնքային փողոցները , ներցանցային ոռոգման համակարգը և այլն:

Համայնքի տնտեսությունների թիվը 267 , բնակչության թիվը՝ 1058 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 475 մարդ:

Կիսամյակի ընթացքում համայնքում ծնվել են 9 երեխա, մահացածներ 3 մարդ :

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ 31. 12 .2019թ. դրությամբ

2019թ. հավաքագրվել է եկամուտներ՝

Հազար դրամ

N	Անվանումը	Տարեկան պլան	2019թ, տարեկան	Կատարողական %
			փաստացի	Տարեկան
1	Հողի հարկ	4050.0	4410.6	109.0
2	Գույքահարկ	2540.0	2972.9	117.0
3	Տեղական տուրք	60.0	*173.6*	289.0
	պետական տուրք	1431.2	2309.9	161.0
4	Տեղական վճար / ծնող գումար , աղբահանություն/	240.0	359.7	150.0
5	Պետ.բյուջեից տրամադրվող դոտացիա	20268.8	20268.8	100.0
	Պ/Բ տրամադրվող.այլ /սուբվենցիա/	0	2100.0	0
	Ֆոնդային բյուջե	15581.2	15581.2	100.0
6	Պահուստային հող. վարձ. Օտարում	1060.0 0	1086.8 497.4	*103.0* 0
	Ընդամենը վարչական բյուջե	29650.0	31582.3	107.0
	Ընդամենը եկամուտներ	29650.0	31582.3	107.0
7	Հողի օտարումից մուտքեր	500.0	497.4	0
8	Տարեսկզբի ազատ մնացորդ	15581.2	15581.2	100.0
	Ընդամենը	45731.2	49760.9	109.0

31. 12. .2019թ դրությամբ

		2019թ. Տարեկան		Կատարողական
N	Ծախսերի անվանումը	Պլան տարեկան	փաստացի	% տարեկան
1	Տեղական ինքնակառավարում	20900.0	20766.1	99.0
2	Համայնքի այլ ծառ.	140.0	85.8	61.0
3	Աղբահանություն	900,0	900.0	100.0
4	Մշակույթ սպորտ և ռադ.հեռ. հաղ.	1340.0	1340.0	100.0
5	Կապիտալ նորոգման ծախսեր	10531.2	9584.5	91.0
6	Կրթություն	3900.0	3860.6	99.0
7	Ջրամատակարարում շենքերի շինությունների կառուցում	150,0 1700.0	0 1700.0	0 100.0
7	Ընդ. Բնույթի հանրային ծառ.	520.0	509.0	98.0
8	Սոց.օգնություն	800.0	800.0	100.0
9	Գյուղատնտեսություն	100.0	50.0	50.0
10	Առողջապահություն	450.0	450.0	100.0
11	Կեղտաջրերի հեռացում	450.0	322.2	72.0
12 13	Տրանսպորտային սարքավորում Այլ մեքենաներ սարքավորումներ	950.0 1750.0	943.0 1750.0	99.0 100.0
13	Վարչական սարքավորումներ	1150.0	1148.0	100.0
12	Պահուստային ֆոնդ	----	----	---
13	Ֆոնդային բյուջե	15581,2	15581,2	100
Ընդամենը		45731,2	44209.2	97.0

Հազար դրամ

<<Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Բաղրամյանի համայնքապետարանում կիսամյակի ընթացքում ստացվել է 28 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիք ժամանակահատվածում համայնքապետարանում ստացվել են 251 գրություն, հղվել է 114 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է 285 տեղեկանքներ: Տրվել է համայնքի ղեկավարի 19 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 44 որոշում:

2019թ. կիսամյակի ընթացքում համայնքապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 10 մարդ, որից 5 –ը համայնքային ծառայողներ:

2019թ. կիսամյակի դրությամբ աշխատավարձի և եկամտային հարկի պարտքեր չկան:

2019թ. կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 10 նիստ, 52 որոշում որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել որոշումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ- տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1.Քառահարկ շենքերի տանիքների վերանորոգում

2.Մանկապարտեզի վերանորոգում

3.Ճանապարհների վերանորոգում և լուսավորություն

4. Խմելու ջրագծի վերանորոգում

5.Գազաֆիկացման շարունակում

6.Գյուղտեխնիկայի ձեռք բերում /տրակտոր և գյուղ. գործիքներ/

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՍԱՀԱՐՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

Բաղրամյան համայնքի ընդհանուր ժողով

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Համայնքի ընդհանուր ժողովում բնակիչների և ավագանու կողմից հարց բարձրացվեց ուղերձով դիմել Ձեզ՝

1.Քառահարկ շենքերի տանիքների վերանորոգում

2.Մանկապարտեզի վերանորոգում

3.Ճանապարհների վերանորոգում

4. . Խմելու ջրագծի վերանորոգում

5.Գազաֆիկացման շարունակում

6.Գյուղտեխնիկայի ձեռք բերում /տրակտոր և գյուղ. գործիքներ/:

Խնդրվում է Ձեր միջնորդությունը առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

Բաղրամյան համայնքի ղեկավար Ա.Սահարյան